

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԼԵԶՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Վ. Դ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Մտածողությունն ու լեզուն անխօնելիորեն կապված են միմյանց. չկա լեզու առանց մտածողության և մտածողություն՝ առանց լեզվի: Անփոխարինելի է լեզվի դերը մարդու մտածողության, մտավոր կարողությունների զարգացման գործում: Որքան հարուստ է աշակերտի բառապաշարը և զարգացած է կապակցված խոսք կազմելու կարողությունը, այնքան մեծ են նրա մտածելու հնարավորությունները:

Մարդու մտածողության յուրահատկությունները դրսնորվում են լեզվի միջոցով, ստանում են խոսքային արտահայտությունների տեսք: Սակայն այդ նույն մտածողությունն էլ ծնավորվում, զարգանում և կատարելագործվում է լեզվի կամ խոսքի շնորհիվ:

Դպրոցում ցանկացած ուսուցիչ մեծ անելիք ունի սովորողների մտածողության և լեզվի զարգացման գործնթացում, քանի որ առանց մտածողության և լեզվի ներդաշնակ զարգացման հնարավոր չէ կրթել այնպիսի անհատականություն, ով օժտված է ճկուն տրամաբանությամբ, իր առջև դրված խնդիրները ստեղծագործաբար լուծելու կարողությամբ: Իսկ այս որակները մարդուն անհրաժեշտ են իր հետագա կյանքն ու բարեկեցությունն ապահովելու համար: Դարուստ բառապաշարը, խոսք կազմելու, տարբեր ոճերով իր մտքերն արտահայտելու կարողությունը զարգացած մտածողության նշաններն են: Ուստի դպրոց մտնելու առաջին իսկ օրից հիմնական աշխատանքները պիտի կազմակերպվեն սովորողների բառապաշարի հարստացման, կապակցված խոսքի ուսուցման ուղղությամբ, որոնք կձևավորեն և կմարզեն սովորողի երևակայությունը, տրամաբանությունը, մտածական նյոււ որակները:

Մայրենի լեզվի ուսուցումն այս առօւմով դառնում է այն հիմնական միջոցը, որի շնորհիվ կարելի է զարգացնել սովորողի լեզվամտածողությունը, իսկ սրանով պայմանավորված էլ՝ նրա ազգային և մարդկային նկարագիրը:

Հարստացնելով աշակերտի բառապաշարը, հաղորդելով քերականական գիտելիքներ՝ ուսուցիչը մտածելու լայն հնարավորություն է ստեղծում նրա համար:

Լեզուն գիտությունների բանալին է, մարդու ամենազորել գենքը:

Աշակերտի խոսքի զարգացումը մայրենի լեզվի դասավանդման հիմնական նպատակներից է: Լեզուն և մտածողությունը փոխապայմանավորված են միմյանցով: Մտքի հարստության համար անհրաժեշտ է խոսքի հարստություն: Խոսքը կառուցվում է բառապաշարով, ժողովրդական առած-ասացվածքներով ու դարձվածքներով, քերականական ձևերով, ոճական հնարաններով:

Գեղարվեստական ստեղծագործությունը միաժամանակ աշակերտի գեղագիտական հակումները, գեղեցիկի նկատմամբ ունեցած ճաշակը զարգացնելու հիմնական միջոցներից մեկն է: Լեզվառնական միջոցները պետք է ուսումնասիրել գեղարվեստական ստեղծագործության բովանդակության քննությանը գուգընթաց: Անմպատակ և անօգուտ է լեզվական միջոցների նյութից կտրված ուսումնասիրությունը: Պահանջել աշակերտից, որ ցույց տա սոսկ պատկերավոր-

ման միջոցները՝ մակդիր, փոխարերություն, համեմատություն, կլինի ծևական ու ինքնանպատակ, չի նպաստի աշակերտի լեզվաօճական գիտելիքների հարստացմանը և լեզվամտածողության զարգացմանը: Անհրաժեշտ է, որ աշակերտը կապակցված խոսքի մեջ կիրառի բնագրից սովորած պատկերավորման միջոցները, որն էլ հնարավորություն կընձեռի նրա լեզվամտածողության և կապակցված խոսքի միաժամանակյա զարգացման համար:

Խաչատուր Աբովյանը գրում է. «Զի գործնականությամբ մանավանդ, քան ինացականությամբ կարելի է սովորել լեզուն»(9, էջ 346):

Խոսքը գոյանում է բառերից, քանի որ որքան հարուստ է աշակերտի ակտիվ բառապաշտը, այնքան զարգացած է նրա խոսքը:

Տարրական դասարաններում բառապաշտի հարստացման ուղղությամբ աշխատանք է տարվում մայրենի դասագրքերում զետեղված բնագրերի վերլուծության ժամանակ, սակայն՝ զուտ գործնականորեն, առանց տեսական տեղեկություններ, սահմանումներ, քերականական եզրույթներ հաղորդելու: Տեքստին ծանոթանալուց հետո պետք է սկսել բառային աշխատանքը: Դրանք կարող են լինել հետևյալ տեսակների՝

● անծանոթ բառերի առանձնացում, իմաստի բացատրություն, իմաստավորում.

- բացատրություն կռահման ճանապարհով.
- անծանոթ բառի բացատրություն տեղեկատվական նյութերի միջոցով.
- առարկայի, նկարի, մակետի, խրտվիլակի կամ գործողության ցուցադրում.
- հականիշ զույգերի ընտրություն.
- հոմանիշ զույգերի ընտրություն.
- բառակազմական վերլուծություն, բառերի բաղադրիչներով նոր բառերի կազմում:

Երբ բառապաշտի հարստացման աշխատանքը գործակցվում է ուսումնասիրվող իրերի ու երևույթների անմիջական դիտման և զննման հետ, երեխան ինքն է ընկալում այն, ինչի մասին պետք է հաղորդի ուրիշը. տեղի է ունենում բառհնաստի զգայական ընկալում:

Անկասկած, բառապաշտը կապակցված խոսքի համար այն կարևոր ու անփոխարինելի շինանյութն է, այն ատադը, որից ձևավորվում է անհատի խոսքը: Գիտելիքը երեխային հաճույք պատճառելու չափ վարպետորեն մատուցելու կերպը միշտ էլ զբաղեցրել է մանկավարժության մեթոդաբաններին: «Պարզ և հայտնի ճշմարտություն է, որ երեխան ավելի լավ յուրացնում է այն, ինչ անցել է նրա սրտի դրնով, ուստի խաղի միջոցով ձեռք բերված գիտելիքները ավելի լավ են նարսվում: Խրամելով իմացական հետաքրքրությունները՝ խաղը հետադարձ կապով նպաստում է լեզվամտածողության նախադրյալների ձևավորմանը և զարգացմանը:

Նորածնոթ բառերի կիրառության դրսերում խոսքում կարելի է կազմակերպել դերային խաղի միջոցով, երբ երեխաները հաղորդակցվելիս իրենց խոսքում օգտագործում են դրանք:

Դիտարկենք խաղի օրինակ, որը զարգացնում է սովորողների բառապաշտը, ինքնուրույն խոսք կազմելու, համեմատելու, վերլուծելու կարողությունները,

Երևակայությունն ու ստեղծագործական մտածողությունը:

Խաղ 1. «Փոստատարը նամակ բերեց» (3)

Անհրաժեշտ պարագաներ. փոստատարի պարկի մեջ լցված ծրարներ, որոնց մեջ դրված են նամակներ (թեմատիկ նկարներ): Երեխաներից մեկը, պարկը ուսին, դուրս է զնում:

Ուսուցիչ – Երեխաներ, այսօր Արմենը մեր փոստատարն է: Տեսմենք նա ու՞ն է նամակ բերում:

Խաղի ընթացքը. փոստատարը մտնում է դասարան և մի քանի աշակերտի հանձնում նամակներ: Երեխաները բացում են իրենց հասցեագրված նամակները և լուր դիտում:

Ուսուցիչ – Ո՞վ կարող է պատմել նամակի բովանդակությունը: Ցանկալի է, որ ներկայացնելիս խոսքում կիրառեք նոր սովորած բառեր:

Նամակ ստացողները հերթով պատմում են՝ խոսքում կիրառելով այդ օրը սովորած բառերը:

Խոսքի զարգացման և բառապաշարի հարստացման ուղղությամբ տարվող աշխատանքներում հատուկ տեղ է տրվում կայուն բառակապակցությունների ու դարձվածքների, քևավոր խոսքերի ու շուտասելուկների, առածների ու ասացվածքների ուսուցմանը: Օրինակ՝ տրված դարձվածքի իմաստն արտահայտող բառակապակցությունը պիտի նշի և դարձվածային կառույցը գործածի նախադասությունների մեջ (5):

«Աչքի ընկնել» դարձվածքը նշանակում է.

1. վայր ընկնել,

2. ուշադրություն գրավել,

3. նկատի ունենալ,

4. տեսանելի լինել:

Բառապաշարի հարստացման անփոխարինելի միջոցներ են պատկերավորման միջոցների ուսուցումը: Օրինակ՝

Պատկերավորման հինգ միջոց է գործածված (նշել և գործածել նախադասության մեջ).

«Իսկ քամին ուրախ սուլում էր հեռվում

Եվ ծիծաղում էր անտարի վրա» (ՅՍ)

1. մակղիր,

2. համեմատություն,

3. փոխարերություն:

Հոմանիշների և հականիշների ուսուցման ուղղությամբ կատարվող աշխատանքները ևս պետք է միտված լինեն սովորողների բառապաշարի հարստացմանը: Օրինակ՝

«Թակարդ» բառի հոմանիշներն են (նշել և գործածել նախադասության մեջ).

1. ճարմանդ և կոճակ,

2. դարան և որոգայթ,

3. դարակ և զզրոց:

Բառապաշարի հարստացման միջոցներ են բառակազմական, բառաբարդման, վերլուծական, համադրական աշխատանքները: Օրինակ՝

Ո՞ր շարքում են նույնարձատ բառերը.

1. ձվածեղ, ձվածեկ, ձևական,

2. մոլեգնել, ձևամոլ, մոլախաղ,
3. շինօու, նորաշեն, շնիկ,
4. հևասպառ, հևիիկ, շնչահե:

Սովորողի լեզվաընկալումը և կապակցված խոսք կազմելու կարողությունների ձևավորումը խորապես պայմանվորված են տեքստի համակողմանի ուսումնասիրությամբ և մեկնաբանությամբ: Մայրենի լեզվի ուսուցման, հատկապես սովորողների խոսքի զարգացման գործնթացում շատ կարևոր է ցանկացած տեքստի ուսումնասիրությունը: Տեքստը դառնում է այն ակնառու-դիդկտիկական հիմքը, որի օրինակով աշակերտը սովորում է կառուցել իր սեփական խոսքը (1, էջ 286):

Մարդու մտածողությունը ձևավորվում, հստակվում և վերացարկման ոլորտներն է մտնում պատկերների կուտակման ճանապարհով: Գրական երկերի տեքստերի համակողմանի ուսումնասիրությունը ծառայում է վերոհիշալ խնդրի լուծմանը, այն է՝ զարգացնել սովորողների պատկերավոր մտածողությունը, երևակայությունը և խոսքը:

Գրական-գեղարվեստական բնագրի հանգամանալից ուսումնասիրությունը միջոց է դառնում պատկերների կուտակման, ինքնապատահայտման, վերացական մտածողության և խոսքի զարգացման, ստեղծագործական ունակությունների դրսնորման համար: Բացի դրանից՝ տեքստի համակողմանի ուսումնասիրությունը օժանդակում է սովորողների լեզվամտածողության զարգացմանը:

Ժամանակակից փոխներգործուն (ինտերակտիվ) և համագործակցային մեթոդների կիրառումը բառապաշարի և դրա դրսնորման՝ կապակցված խոսքի զարգացման լավագույն միջոցն է: Աշակերտը, մասնակցելով գիտելիքի ձեռքբերման գործնթացին, կրավորական դեր ստանձնած ունկնդրից վերածվում է ակտիվ մասնակիցի, ինչը անկասկած նպաստում է նրա մտածողական որակների, կապակցված խոսքի զարգացմանը:

Կրտսեր և միջին դպրոցի մայրենիկ դրասաժամերին ուսումնասիրվում են նաև գիտահանրամատչելի կամ ճանաչողական բնույթի տեքստեր, որոնցից է «Ունահետքեր լուսնի վրա» (5, էջ 158):

Բերենք նշված տեքստի ուսումնասիրության դասի օրինակ՝ ժամանակակից փոխներգործուն մեթոդներով կազմակերպված:

- **Խթանման փուլ.** Կիրառվում է «Բառ-բանալի» հնարը (8, էջ 79):

Ուսուցիչը տեքստից առանձնացնում է հինգից վեց բառեր, որոնք բանալի բառեր են, օրինակ՝ Լուսին, Երկիր, տիեզերանավ, տիեզերագնաց, հոլշատախտակ, ոտնահետքեր: Բառերն ուսուցիչը գրում է գրատախտակին՝ աշակերտներին հիշեցնելով, որ բառերը վերցված են այն պատմությունից, որը պետք է ուսումնասիրեն քիչ հետո: Ապա հրահանգում է բանալի բառերով ստեղծել փոքրիկ պատմություն: Աշխատանքն անհատական է: Դաջորդ քայլին ձևավորվում են փոքր խմբեր: Ստեղծված խմբերում ցածրածայն քննարկվում են խմբի անդամների հորինած պատմությունները և կայացվում որոշում, թե որ պատմություններն են ներկայացնելու ամբողջ դասարանին: Յուրաքանչյուր խմբից ընտրվում է մեկ կամ երկու պատմություն կամ էլ ամբողջ խմբով լրացնում, խմբագրում են որևէ մեկի արդեն հորինած հետաքրքիր պատումը: Խմբերի պատրաստած տեքստերն ընթերցելուց և մեկանաբանելուց հետո անցնում են ուսումնական

Այսութիւն ընթերցմանը:

- **Իմաստավորման փուլ.** Կիրառվում է «Ուղղորդված ընթերցանություն» մեթոդը (8, էջ 28):

Այս մեթոդի կիրառման դեպքում տերստն ընթերցվում է ոչ թե ամբողջությամբ, այլ տրամաբանական ավարտ ունեցող հատվածներով: Յուրաքնչյուր հատված ընթերցելուց հետո ուսուցչի ուղղորդող հարցերով վերլուծության է Ենթարկվում ընթերցվածը, կատարվում են մեկնաբանություններ և կանխատեսումներ: Այս մեթոդի կիրառման արդյունքում նյութը դառնում է տպափորիչ, հիմնական միտքը՝ ըմբռնելի:

Ուսուցիչը կամ լավ ընթերցող աշակերտներից մեկը սկսում է կարդալ մինչև «Բայց մարդու շարունակ երազում էր, որ ինքը ոտքը դնի Լուսնի մակերևույթին»:

Ապա ուսուցիչը հարցեր է տալիս ընթերցածի վերաբերյալ.

- Ի՞նչ իմացաք Լուսնի մասին,
 - Ի՞նչ ազդեցություն է ունենում Լուսինը Երկրի վրա:

Այսուհետև ընթերցում են մինչև «Ամբողջ աշխարհը սրտատրով սպասում էր, թե ինչ է լինելու»։ Ուսուցիչը խնդրում է դադար առնել և առաջադրում է հարց։

- Ի՞նչ զարմանալի իրադարձություն տեղի իմացավ 1969 թվականին:

Այսուհետև ընթերցում են մինչև վերջ և ուսուցիչն աշակերտներին հարցեր է ուղղում.

- Տիեզերագնացների գրույցից հ՞նչ իմացաք Լուսնի մասին:
 - Գնահատի՞ր երեք տիեզերագնացների կատարած աշխատանքը:
 - Դու ո՞ւմ տեղող կուրզենայիր լինել:

- **Կիրառման փուլ.** Կիրառվում է «Վեց ա-երի ռազմավարություն» մեթոդը (8, էջ 72):

Սովորողները զույգերով երկխոսություն են վարում՝ փորձելով պարզել, թե ինչ սովորեցին.

- Ինչո՞ւ սովորեցիր այս թեման:
 - Ի՞նչ տվեց այն քեզ:
 - Որտե՞ղ էին տեղի ունենում դեպքերը:
 - Ե՞րբ էին տեղի ունենում դեպքերը:
 - Ինչպե՞ս և ինչո՞ւ էին տեղի ունենում դեպքերը

Որպես տնային հանձնարարություն տրվում է հետևյալ առաջադրանքը.

«Գրել անվանակապ կամ բանակապ՝ Լուսին բառով»:

Հետո աշակերտները ստանում են հանձնարարություն.

«Պատկերացրո՞ւ, որ Լուսնի վրա կյանք կա. հորինի»

«Կյանք Լուսնի վրա» վերնագրով՝ Ուսուցիչն աշակերտներին տալիս է ուղենիշ հարցեր, որոնց օգնությամբ կկարողանան պատմվածք գրել:

● Ավելացնելու

- Ηρκαρία αποτελεί αδερφή της, πατέρας της είναι ο Ορτέλιος.
 - Ορτέλιος ήταν ο πατέρας της Καρολίνας.
 - Ορτέλιος ήταν ο πατέρας της Καρολίνας.
 - Η Καρολίνα είναι η μεγαλύτερη αδερφή της Καρολίνας.

Երեխանները պետք է աշխատեն, որ պատմության մեջ հնարավորինս արտահայտվեն այս կամ այն դեպքի, իրադարձության հետ կապված իրենց զգաց-

մունքները, հույզերը, տպավորությունները: Ուսուցիչը խորհուրդ է տալիս վեր-հիշել յուրացրած տեքստը՝ առանձին պարբերություններով՝ պահպանելով դեպքերի գարգացման հաջորդականությունը:

Ուսուցիչը օգնում է, որ երեխաներն իրենց սեփական պատմության իրադարձությունների շղթայի մեջ կարողանան գտնել թեման, խնդիրը, գլխավոր իրադարձությունները, խնդրի ավարտը՝ լրացնելով պատմվածքի կմախքը:

Դա կօգնի նրանց նախապես մտքում ուրվագծելու ասելիքի սինեման և տրամաբանորեն ճիշտ կառուցված խոսք կազմելու:

Պատմվածքի կմախքը՝

թեման,
հիմնախնդիրն արտահայտվում է,
դրանից հետո,
շարունակություն,
իսկ հետո,
խնդրի լուծումը,
պատմություն ավարտվում է:

Այնուհետև աշակերտներն ընտրում են իրենց պատմվածքի վերնագիրը, գլխավոր և այլ հերոսներին, վայրը, որտեղ տեղի է ունենում դեպքը և լրացնում պատմվածքի քարտեզը՝ պահպանելով տրամաբանական կապը:

Պատմվածքի քարտեզ՝

վերնագիր,
գլխավոր հերոսներ,
փաստեր,
այլ հերոսներ,
որտե՞ղ, ե՞րբ,
միջավայր,
խնդիրը,
լուծումը,
ի՞նչ:

Պետք է նկատի ունենալ, որ աշակերտները կարող են նաև իրենց սեփական քարտեզները կամ գծագրերն առաջարկել:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Ալեքսանյան Թ.**, Տեքստի ուսումնասիրության սկզբունքները, Շիրակի պատմամշակության ժառանգությունը. հանրապետական յոթերորդ գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու, Գյումրի, 2007, էջ 286-289:

2. **Գյուլամիրյան Զ.**, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր., «Զանգակ»-97», 2006, 326 էջ:

3. **Խաչատրյան Յ., Թորոսյան Կ., Սարգսյան Վ., Չիրովիչյան Կ., Մայրենի-4** հանրակրթական դպրոցի դասագիրը, «Սակմիլան-Արմենիա», Եր., 2009թ., 176 էջ:

4. Հայոց լեզու և գրականություն. գնահատման առաջադրանքների նմուշների ժողովածու (կազմեցին՝ Ալեքսանյան Թ. և ուրիշներ), Եր., «Տիգրան Մեծ», 2007, 200 էջ:

5. Հանրակրթության պետական կրթակարգ և Սիցնակարգ կրթության պետական չափորոշիչ, Եր., «Անտարես», 2004, 71 էջ:

6. Հայոց լեզու, գրականություն. հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր (կազմողներ՝ Յովսեփյան Լ. և ուրիշներ), Եր., «Անտարես», 2007, 88 էջ:
7. **Սարուխանյան Ս. և ուրիշներ,** Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, Վարժություններ, Վաճաձոր, ԿԱԻ, 2008, 101 էջ:
8. **Մանուկյան Ա.,** Բանավոր խոսքի զարգացումը հայոց լեզվի ուսուցման ընթացքում, «Լույս», Եր., 1976, 347 էջ:
9. **Վյոցսկի Լ. Ը.,** Собрание сочинений, том 2, Мышление и речь, Лекции по психологии, М., Педагогика, 1982, 502 с.

ОБОГАЩЕНИЕ СЛОВАРНОГО ЗАПАСА УЧАЩИХСЯ КАК СРЕДСТВО ЯЗЫКОВОГО МЫШЛЕНИЯ

В. Д. Хачатрян

В статье рассматривается проблема развития языкового мышления. Нами предложены примеры языковых упражнений, игр, способствующих развитию языкового мышления. Представлены образцы уроков, организованных по современным /интерактивным/ методам. Такой урок будет способствовать развитию связной речи учащихся, воображения, языкового мышления.

THE ENRICHMENT OF LEARNERS' VOCABULARY AS A WAY OF DEVELOPING LINGUISTIC THINKING

V. D. Khachatryan

The problem of the development of linguistic thinking is touched upon in this article. The examples of language exercises and games that promote the development of linguistic thinking, are given. Also an example of a lesson, organized by modern / interactive/ methods is presented, which promotes the development of the learners' coherent speech, imagination and creative abilities, as well as the linguistic thinking.

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՆԹԱՑԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

Ա. Վ. ԴԱՎԹՅԱՆ
Խ. Արովյանի անվան ՀՊՄՀ, ԳՊՀ դասախոս

Աշխատանքը չի խայտառակում մարդուն,
դժբախտաբար պատահում են աշխատանքը խայտառակող մարդիկ:
Գրանտ

Մարդու մասնագիտական ընտրության կազմակերպման և մասնագիտական պիտանելիության գնահատման պատմության մասին մեզ տեղեկություններ են հասել դեռևս շատ վաղ ժամանակներից: Դրանք հիմնականում վերաբերում են մասնագիտությանն առնչվող գիտելիքների, կարողությունների և ընդունակու-